

ԷՆԵՐԳԵՏԻԿ ԳՈՐԾՈՆԸ ՄԻԱԲԵՇՈ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԻ ՂԵՄ ՈՒՂՂՎԱԾ ԼԾԱԿ
ՌԴ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ*

Անդրանիկ Գրիգորյան

Բանակի բառեր՝ Էներգետիկ գործոն, միջտարածաշրջանային հարաբերություններ, միաբներ աշխարհակարգ, աշխարհաքաղաքական գործընթաց, արտաքին քաղաքականություն, Ռուսաստանի Դաշնություն, Արևելք-Արևմուտք հարաբերություններ:

Էներգետիկ գործոնը արդի աշխարհաքաղաքական գործընթացներում ունեցած իր դերակատարմամբ այն կարևորագույն օղակն է, առանց որի տրամաբանությունը հաշվի առնելու կամ հասկանալու միջազգային միջտարածաշրջանային ու աշխարհաքաղաքական գործընթացներն ու դրանց ընթացքը կանխորոշող քաղաքական վեկտորի սոլությունը հասկանալը, առավել ևս, քաղաքագիտական կանխատեսումներ անելը արդի փուլում գրեթե անհնար է: Բոլոր պատմանական ժամանակահատվածներում էլ, որոշակի այս կամ այն աշխարհաքաղաքական այլ գործոնների հետ մեկտեղ, էներգետիկ գործոնի նկատմամբ միշտ էլ որոշակի քաղաքական հետաքրքրություն է եղել, սակայն այդ հետաքրքրությունն էլ ավելի առարկայական ու գործնական բնույթ սկսեց կրել հատկապես նոր ժամանակներում, իսկ հետերկորորդաշխարհամարտյան տարիներին, արդեն կապված աստոմի զարգացմամբ, բնակչության օրըստորե ավելացող կենցաղային էներգածախս պահանջների բավարարմամբ ու բնակչության թվաքանակի կտրուկ աճով, նախկին էներգետիկ գործոնը վերածվեց միջազգային ու միջտարածաշրջանային կարևորագույն խնդրի, որի լուծման եղանակները դարձան միջազգային հեղինակավոր կազմակերպությունների (ՍՍԿ, ԵԱՀԿ, ԵՄ, ԱՍՀ և այլն) ու այդ կազմակերպությունների կողմից ստեղծված հաստուկ կոմիտեների ու մարմնների (ՕՊԵԿ, ՍԱԳԱՍԵ, ԵՄ էներգետիկ հանձնաժողով և այլն) հիմնական օրակարգային խնդիրը: Եթե պատմական վաղ անցյալում՝ էրմիկական խմբավորումների, պետությունների ու կայսրությունների ժամանակաշրջանում, որպես առանձնացնող տարանջատիչ սահմանագիծ դիտարկվում էր տեղաբնիկների կամ բարի ժողովրդի պայքարն ընդունմ բարբարուների, քրիստոնյաների պայքարն ընդունմ անհավատ հեթանոսների կամ մահմեղականների, տեղաբնիկների պայքարն ընդունմ զաղութարարների և, ի վերջո, անգախոսների միավորումն ընդունմ ռուսախոսների, ապա արդեն արդի աշխարհաքաղաքական մարտահրավերների շրջանակում երկրները տարանջատվում են էներգակիրներ արտադրող և արտահանող, էներգակիրներ սպառող, և որպես կապող օղակ՝ այդ շղթան ամբողջականանում է էներգակիրներ տեղակիրխող միջանցիկ երկրների տարանջատմամբ: Արդի քաղաքագիտական ձեռնարկներում և վերլուծականներում աստիճանաբար ավելանում են զագի, նավթի, աստոմի հետ կապված տերմիններն ու դրույթները, որոնց աստիճանական աճն ու դրանով պայմանավորված տարաբնույթ քննարկումները մակերեսային կամ լուսանցքային տեսանկյունից թերևս ուղղված են մարդկային համընդհանուր բարեկեցությանն ու խաղաղ գոյակցման ապահովմանը, սակայն խորքային առումով էլ ավելի են խորացնում կամ արագացնում առկա խնդիրները՝ քաղաքագիտության ու քաղաքական գործընթացների նկատմամբ պատասխանատվություն ստանձնած գործիչների համար դառնալով առաջնային խնդիրներից մեկը ողջ աշխարհում:

* Հոդվածն ընդունվել է 10.11.2015:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ք.գ.դ., պրոֆեսոր Գարիկ Քերյանը:

ՄԵՐՈՐԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

Ներկայումս արևմտյան քաղվերլուժական շրջանակներում ակտիվորեն շրջանառվում է այն տեսությունը, որ Ուսաստանը տարածաշրջանում միավորմանիորեն կամք է թելադրում՝ օգտագործելով իր էներգակիր բնակչության բազայի առավելությունները։ Վերոնշյալը դիտարկվում է որպես հարված գոտկատեղից ներքև և չի համապատասխանում ազատ առևտորաարդյունաշրջանբերության ընդունված կանոններին [1]: Սակայն խնդրի համակողմանի ուսումնասիրումը մի փոքր այլ պատկեր է բացում, որտեղ ձշով ու սիսլի սին փնտրութը տեղը գիշում է օբյեկտիվ քննարկամանն ու իրական պատկերի վերհանմանը։ Խնդրի դիտարկումը, առանց հաշվի առնելու էներգետիկ գործոնով պայմանավորված աշխարհաքաղաքական գործընթացների առաջ քաշած գործիքակազմը, ընդամենը կմնանվի քարոզական նյութի, որը գուցեն որոշակի շրջանակներում որոշակի արդյունք կտա՝ կապված հասարակական լայն զանգվածների մոտ որոշակի կարծիքի ծևավորմամբ, բայց իրականում կորցնում է քաղաքագիտության ուկե սկզբունքներից մենքը՝ կանխատեսելիությունը, ու կանխատեսելիության պակասն է, որ խնդրից արդիական է դարձնում։ Ներկայիս ուկրաինական ճգնաժամը վայր ապացուց է, թե ինչքան վատ հետևանքներ կարող է ունենալ քարոզական հետևողականությունը ու դրամով պայմանավորված՝ միջտարածաշրջանային և աշխարհաքաղաքական գործընթացները ինչպես կարող են դուրս գալ տրամաբանության շրջանակից։

Հենց էներգետիկ գործոնով էլ պայմանավորված՝ 21-րդ դարասկիզբը հանդիսավագ Ուսաստանի Դաշնության արտաքին և ներքին քաղաքականության մեջ արձանագրված շրջադարձային բեկումի մեկնակետ, որի երևակայական ու առարկայական սկիզբը շատ քաղվերլուժաբանների համար ժառանգեց որպես յուրօրինակ հետիհաշվարկի վերալիցքավորման ու այսպես կոչված վերալիցքաթափնան սկիզբ։ Սկզբնական շրջանում թե՛ ռուսական, թե՛ արևմտյան և թե՛ հեռավորարևելյան մի շարք քաղվերլուժաբաններ Ուսաստանի Դաշնությունում տեղի ունեցած իշխանակիոխությունը համարեցին ներքին պալատական ու ոչ շրջադարձային։ Վերոնշյալը ծևակերպվեց որպես ելցինյան շրջանի տրամաբանական շարունակություն, ու վերջիններս նոյնիսկ չոգենչվեցին Վլադիմիր Պուտինի՝ վարչապետության տարիներին իրականացրած քավականին ինքնուրույն ու հաջող բարեփոխումներով, և ինչպես պնդում էր արևմտյան մամուլը, Պուտինի բավականին բարձր վարկանշը դեռևս չէր խոսում նրա ինքնուրույնության մասին [2]։ Եվ այսպես ներքին պալատական իշխանակիոխության սցենար հիշեցնող ռուսների կողմից «ամանորյա երազ» որակված իշխանակիոխության ակտը, գորեք բոլորի կողմից որակվեց լոկ լուսանցքային ծևակիոխություն (տրանսֆորմացիա), որը բովանդակային լուրջ ակնկալիքների տեսանկյունից ընդամենը հույս էր ներշնչում։ Իսկ ահա արդեն Վլադիմիր Պուտինի ստացած ելցինյան ժամանակներից մնացած ֆինանսատեսական ճգնաժամը, Փարիզյան ակումբին ունեցած ֆինանսական պարտավորությունները, չենական պատերազմի դեռևս չափացած վերքերը, ներքին հումքային բազային ու էներգատեսուրումների անխնա վատնան մշակույթը, մեղմ ասած, սկզբնական շրջանում ակտիվ արտաքին քաղաքականություն վարելու համար այնքան էլ լայն հորիզոններ չէին ապահովում [3]։ Հատկապես մտահոգիչ էր արևմտյան պարապական արտաքին քաղաքական ուղղությունը, որտեղ նախկին Վարչավյան դաշինքի երկրները հիմնավոր անհնազանության նշաններ էին ցույց տալիս։ Վերոնշյալ ուղղության մեջ որպես լրջագույն մարտահրավեր էր արդեն ԱԱԾՕ-ի դեպի արևելք ընդունման ակտիվ բանակցային գործընթացի սկիզբը։ Վերոնշյալ քաղաքական իրադրությունը արևմտյան քաղվերլուժաբան Ձեյմս Շերի կողմից բնութագրվում էր որպես անհավասարների պայքարում թույերի պարադրսալ հաղթանակ [4]։ Իհարկե,

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

արևմտյան պաշտպանիչ շրի առաջ մղումը դեպի Արևելք դեռևս չէր ներառում Ռուսաստանի Դաշնության համար կարևորագույն ռազմավարական տարանցիկ պետություն Պուկրահման: Սակայն ներկայիս ուկրաինական թնջուկի առարկայական արմատները գտնվում են պատմական այս ժամանակահատվածում: Որպես վերոնշյալին հակադեցություն նախագահ Պուտինի գլխավորած քաղաքական պետական ապարատի առաջ քաշած քաղաքական հակադեցությունների փաստագրական հաջորդականության մեջ գերակա տեղ էր գրադեցում էներգետիկ գործոնը:

21-րդ դարակարի առաջին տասնամյակին Ռուսաստանի Դաշնության արձանագրած արտաքին քաղաքական գործընթացների պատմահամեմատական վերլուծության արդյունքները հիմք են տալիս որոշակի քաղաքագիտական եզրահանգումներ կատարելու՝ ըստ որի՝ Պուտինյան վարչակազմի քաղաքական գործունեության արդյունքում մինչպուտինյան նախկին Ռուսաստանը, որը բնորոշվում էր որպես անվերահսկելի անսահմանափակ բնական ռեսուրսների աշխարհագրական արեայի, վերածվեց համակարգված պետական կազմավորման [5]: Ըստ այդ բնութագրման՝ պուտինյան Ռուսաստանն արդեն կարողանում էր իր աշխարհագրական դիրքից ոչ միայն ֆինանսատնտեսական դիվիդներներ քաղել, այլև այդ ռեսուրսներից ստացված ֆինանսական եկամուտները վերածել լրջագույն քաղաքական գործոնի: Հենց վերոնշյալի տրամարանական շրջանակում ազգային անվտանգության ռազմավարության մշակման գործընթացում լրջագույն դերակատարում ծերք բերեց Ռուսաստանի տարածքում առկա բնահումքային բազան: Ազգային անվտանգության տեսանկյունից ու արտաքին քաղաքական ուղղության մեջ էներգետիկ գործոնի ֆունկցիոնալ դերակատարումն անշահման մեջ շրջադարձային կարելի է համարել 2000թ. սեպտեմբերը. Վկաղինիր Պուտինի գլխավորությամբ տեղի ունեցած Ազգային Անվտանգության Խորհրդի նիստի շրջանակում կայացվեց որոշում, որի համաձայն՝ Ռուսաստանի Դաշնությունը պետք է օտարերկրյա էներգետիկ կորպորացիաներից հետ գներ էներգետիկ բնաւեսուրային բազաների շահագործման իրավունքը: Վերոնշյալը նշանակում էր օտարերկրյա էներգետիկ հակաների ունեցած ազդեցիկ գործոնի նվազում կայացվելիք քաղաքական որոշումների վրա, որը ազգային անվտանգության ռազմավարության տեսանկյունից շատ կարևոր քայլ էր և գուցե առաջին մարտահրավերը ուղղված Արևոտքին, որը կարելի է հետևարդարական շրջադարձային կետ: Վերոնշյալ քաղաքական որոշումը բիզնեսի տեսանկյունից չէր նշանակում արևմտյան գործընկերների մուտքի արգելանք ռուսական շուկա, այլ այն քաղաքական կամքին հենված որոշում էր, որը արգելում էր ոչ ռուսական կապիտալի վրա հիմնված ընկերություններին ռուսական էներգետիկ ու բնահումքային շուկայում ունենալ բաժնետիրական առավելություն՝ այդ կերպ վերջիններիս գրկելով ինքնուրույն քաղաքականություն վարելու հնարավորությունից: Ըստ այդմ նշագծվեցին Ռուսաստանի Դաշնության մինչև 2020թ էներգետիկ ոլորտում ռազմավարության դրույթները, որը Ռուսաստանի Դաշնությունում գործող օրենսդրության համաձայն ընդունվեց Պուտինի կողմից: Այդ փաստաթղթով ձևակերպվեցին Ռուսաստանի Դաշնության էներգետիկ քաղաքականության հիմնադրույթները, որոնք ստացել էին այսպիսի ձևակերպում:

Ա. Օգտագործել ազգային ՁԵԿ-երի պուտենցիալը, որպես աշխարհաքաղաքական գործոն, այսպես կոչված անվտանգության բարձիկ և որպես մոցակցային առավելություն միջտարածաշրջանային և համաշխարհային քաղաքական թատերաբեմու։

Բ. Խիստ վերահսկողություն սահմանել էներգետիկ ոլորտի նկատմամբ, այդ վերահսկողության իրականացումը պետք է իրականացվի իշխանության ամենաբարձր օ-

ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

ղակների՝ նախագահի ու կառավարության կողմից, իսկ կայացվելիք որոշումները պետք է հավանության արժանանային վերոնշյալ մարմինների կողմից:

Գ. Սահմանել պետական վերահսկողություն իհմնական նավթագագային ընկերությունների, էներգակիրներով հարուստ հանքերի ու գազախողովակաշարերի մկանությամբ.

Դ. Ուստական ազգային էներգակիր ընկերություններին ցուցաբերել պետական օժանդակություն, արտաքին շուկաներում իրականացնել ակտիվ էքսպանսիվ քաղաքականություն.

Ե. Օգտագործել պետական բյուջեի նավթագագային եկամուտները պետության հասարակաբարձրական կայունության ապահովման ու երկրի տնտեսության տեխնոլոգիական արդիականացման համար [6]:

Վերոնշյալ փաստաթուղթը արևմտյան վերլուծաբանների կողմից դիտարկվեց խիստ էքսպանսիոն, հակասող ազատ արևտրաշրջանառությանը, ոչ ազատական, հականվրոպական ու էլի մի շարք բացասական պիտկաումներով: Իսկ ահա ռուսական մամուն ու վերլուծաբանները այդ փաստաթուղթը դիտարկեցին որպես Ելցինյան ազատականության բերած սխալների ուղղում ու խիստ պետականակենտրոն:

Քաղաքագիտության շրջանակում այս ռազմավարական փաստաթուղթը միանշանակ ռուսական շահերի վերհանում է նշանակում և լրջագույն մարտահրավեր էր հատկապես արևելանվրոպական ու ԱՊՀ երկրներին, որոնց էներգահամակարգերը (և ոչ միայն), կապված ընդհանուր պատմական անցյալի հետ, ռուսական էներգակիրներից առանց այն էլ վաղուց արդիական դարձած վերափոխման (ոդիվերսիֆիկացիայի) խնդրի առաջ էին կանգնում: Եթե վերոնշյալ ռազմավարական փաստաթուղթը հիմնականում կրում էր դեկարտասիկ բնույթ, և աշխարհում էներգակիրներ արտահանող յուրաքանչյուր երկրի համար տրամաբանական կիմներ նման ռազմավարության որդեգրումը, ապա բնահումքային բազայի վրա օտարերկրյա կապիտալի վրա սահմանափակում դնելու դրույթը չէր տեղափորկում ազատ շուկայական տնտեսվարական գործառույթներ որդեգրած պետության համար և աշխարհաբարձրական տեսանկյունից լուրջ խնդիրներ էր պարունակում Միացյալ Նահանգների տարածաշրջանային դաշնակից պետությունների համար: Խաղի նմանատիպ կանոնների արձանագրումը մարտահրավեր էր անցումային փոլում գտնվող ԱՊՀ և արևելանվրոպական երկրների էներգետիկ անվտանգությանը, որը երկրներից շատերի համար այդպես էլ մնաց անհաղթահարելի: Ինչպես նաև, թեև Ուստատանի Դաշնության կողմից էներգետիկ բնագավառում արձանագրված փոփոխությունները (տրամաժողովական միջազգային մակարդակում անմիջականորեն չէին վճարում Միացյալ Նահանգներին կապված ԱՄՆ-ում առկա ինքնարավ էներգահետևուրսային բազայի առկայությամբ ու վերջինիս համար այլ տարածաշրջաններից էներգակիրների ներկրնան բավականաչափ դյուրինությամբ, սակայն ռուսական կողմի հավակնությունները արդեն չէին տեղափորկում աշխարհաբարձրական տեսանկյունից, քանզի Միացյալ Նահանգները՝ որպես միաքններ աշխարհակարգի պահպան, չէր կարող հանդուրժել դաշնակից երկրների դիրքերի բուլացումը տարածաշրջանում, քանզի այդ թուլացումը աշխարհաբարձրական լրջագույն վտանգներ էր պարունակում, ինչը միաքնեռականության տեսանկյունից նշանակում էր անմիջական Միացյալ Նահանգների թուլացում: Ի դեպք, խնդրի աշխարհաբարձրական աստաի մասին են վկայում ներկայիս Ուկրաինական թնօրուկն ու ըստ այդմ՝ Ուստատան-Արևմուտք հարաբերությունների սրումը: Իսկ արդեն Ուստատանի նկատմամբ ներկայումս կիրառվող տնտեսական պատժամիջոցների մեջ էներգետիկ ծերնարկությունների գերակայությունն ու նավթի գների արհեստական անկումը ևս մեկ անգամ փաստում են Ուստատա-

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

նի աշխարհաքաղաքական հավակնություններում էներգետիկ գործոնի ունեցած վճռական նշանակության մասին: Խև արդեն ժամանակագրական առումով 2014թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին Ռուսաստանի կողմից Զինաստանի և Թուրքիայի հետ ձեռքբերված միջազնուական էներգետիկ համաձայնությունները կարելի է դիտարկել սկզբած աշխարհաքաղաքական մրցավագրի շարունակություն: 2014թ. դեկտեմբերի 1-ին Անկարայում Վ. Պուտինի կողմից Հարավային հոգած գազամախագծից հրաժարվելու մասին հայտարարությունը հստակ մեսիջ էր դեպի Արևմուտք՝ Ռուսաստանի համար այլընտրանքի փաստի հստակ արձանագրմամբ [7]: Ռուսական արտաքին քաղաքական շրջադարձը դեպի Զինաստան և Թուրքիա պետք է հասկանալ գիտական շրջանակում ընդունված (ad hoc) սիրույթում (պարադիգմայում) և ոչ մի դեպքում չպետք է դիտարկել որպես կարևոր արևելաեվրոպական արտաքին քաղաքական ճակատում պարտության ընդունում: Ի դեպի, Ռուսաստանի կողմից թուրքիայի՝ ԱՄՆ դաշնակցի դերակատարման մեջացումը տարածաշրջանային էներգետիկ (և ոչ միայն) խնդիրները համատեղ լուծելու հստակ հաղորդագրություն էր՝ ուղղված ԱՄՆ-ին: Խնդիրը դիտարկելով Զինաստանի հետ 2014թ. նոյեմբեր ամսին ձեռք բերված էներգետիկ համաձայնությունների ենթատեքստում՝ [8] Ռուսաստանի արևելաեվրոպական տարածաշրջանում ռուսական էներգակիրներին այլընտրանքի բացակայության պայմաններում այս հաղորդագրությունը բավականին հիմնավոր տեսք է ստանում: Կարծում ենք՝ վերոնշյալը հիմնավոր հանգամանք է պնդելու Ռուսաստանի Դաշնության օրակարգում աշխարհաքաղաքական հավակնությունների առկայության մասին, քանզի ՌԴ-Հինաստան էներգետիկ ոլորտում արձանագրած համաձայնության կենսագործումը հնարավորություն կտա վերջինիս դիմագրավելու արևմտյան տնտեսական պատժամիջոցներին, իսկ ահա ռուսական էներգակիրները եվրոպական տարածաշրջանում արևկան այլընտրանքի մշուշուտությունը բավականին կթուացնի Միացյալ Նահանգների տարածաշրջանի դաշնակիցների դիրքերը ու վերջիններս ստիպված կլինեն ընդունելու խաղի նոր կանոները, որտեղ Ռուսաստանի ունեցած դերակատարումը էականորեն կմեծանալ:

Քաղաքագիտության մեջ որպես մեթոդոգիական առանձնահատկություն դիտարկվում է խնդիրները մակրո և միկրո ոլորտներում ներկայացնելու ու ուսումնասիրելու հնարավորությունը: Վերոնշյալ մեթոդոգիական շրջանակում կարելի է կստահորեն փաստել՝ Ռուսաստանի բարձրագույն իշխանության էներգետիկ ոլորտում իրականացրած շրջադարձը միկրո ոլորտում, այսինքն՝ միջազնուական հարաբերություններում, հատկապես ԱՊՀ և արևելաեվրոպական տարածաշրջանում տարատեսակ վտանգներ էր պարունակում՝ միջտարածաշրջանային համընթաց զարգացման տեսանկյունից ստեղծելով մեծ խնդիրներ, սակայն մակրո ոլորտում, այսինքն՝ աշխարհաքաղաքական տեսանկյունից այդ շրջադարձը կարելի է դիտարկել որպական այրիզնայով՝ որպես լրջագույն մարտահրավեր միաբներ աշխարհաշինության կառուցվածքին: Այս քաղաքական որոշումը լրջագույն ազդեցություն ունեցավ միջտարածաշրջանային համագործակցային հարաբերություններում ու փոխեց դեպքերի հետագա ընթացքը: Որպես առաջնային ազդեցություն կարելի է դիտարկել արևմտյան էներգակիր հսկաների դուրս մղումը ռուսական բնահումքային շուկայից, որը որպես հակագեցություն հանգեցրեց արևելաեվրոպական էներգամիջանցիկ երկրների միջոցով ռուսական կողմին որոշակի բացասական մեսիջների ուղարկումը և, ի դեպի, պետք է անպայմանորեն նշել, որ այդ մեսիջների հետևում կանգնած էին արևմտյան քաղաքական երկրներն ու ԱՄՆ-ն: Սարդարական մրցավագք հիշեցնող այս լոկալ բախնան հետագա զարգացումներն ու Ռուսաստանի հակագեղելու ունակությունը հանգեցրին ներկայիս ուկրաինական ճգնաժամին, որի ակունքներում գտնվում է Ռուսաստան-Արևմուտք էներգետիկ թնդուկը, որի տրամարա-

ՄԵՍՐՈՒԹ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

նական շարունակությունը կարող է դարձնալ երկկողմ շահերի հետ հաշվի նստումը, ո-դրցավոք, հազարավոր անմեղ մարդկանց կյանք արժեցավ:

Ինչևէ, վերոնշյալ հինգետանոց փաստաթուղթը դուրս էր գուտ փաստաթղթաշրջանային պաշտոնական ծևակերպումային նշանակությունից և լուրջ ռազմավարական նշանակետեր ծևակերպեց, որոնք կտրուկ կերպով փոխեցին Ուսաստանի Պաշնության էմերգենտիկ քաղաքականության հետագա ընթացքն ու աշխարհաքաղաքական հետագա վերածումների խթան հանդիսացան, հենց որի հենքին ի հայտ ենած Հարավային ու Հյուսիսային հոսք գազանախագծերը, Ուսմեթու ու Գազպրոմ էներգակիր հսկաների էքսպանսիոն հաջողությունները ոչ միայն հակազդեցություն էին Արևմուտքին, այլև իրադարձությունների կանխորոշման ու առաջնությունն իրենց ձեռքը վերցնելու խթան էին, որի հիմքում էլ հենց ընկած էին վերոնշյալ էներգետիկ ռազմավարության շրջադարձային փաստաթուղթն ու նախագահ Պուտինի էներգետիկ ոլորտում իրականացրած քայլերը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Симонов К.В. Глобальная энергетическая война, М., 2007, стр. 84; Глушенко Ю.Н. Энергетическая составляющая во внешней политике России, Российский институт стратегических исследований, 25.03.10
2. Гудрич Л., Лантеманн М., Прошлое, настоящее и будущее энергетической стратегии России, ГЕОПОЛИТИКА Эл № ФС 77-32517 от 18 июля 2008 года
3. Sherr J., Challenges in Russia - EU Energy Cooperation, Head Russia and Eurasia Programme, Chatham House, St. Peterburg, 15 oct. 2009, стр 57
4. Sherr J., The Russia-EU Energy Relationship: Getting it right, The International Spectator: Italian Journal of International Affairs, London, 11 June 2010 Keith C. Smith Lack of Transparency in Russian Trade, The Risks to Europe, CSIS, July 2010, p. 45
5. Цыганков П.А., Цыганков А.П. Социология Международных отношений: анализ российских западных теорий, М., 2006, стр. 32
6. Министерство промышленности и энергетики РФ, Энергетическая Стратегия России на период до 2020 года электронная версия
7. Chow E. and Elkind J., Where East Meets West: European Gas and Ukrainian Reality, The Washington Quarterly, January 2009
8. <http://www.kremlin.ru>

ԱՄՓՈՓԱԳԻՐ

**Էներգետիկ գործոնը՝ միաբներ աշխարհակարգի դեմ ուղղված լծակ ՈԴ արտաքին քաղաքականության մեջ
Անդրանիկ Գրիգորյան**

Արդի ժամանակահատվածում Էներգետիկ գործոնի ազդեցությունը միջազգային ու միջտարածաշրջանային հարաբերությունների ընթացքի վրա հասել է մեծ չափերի և մերժականական միջազգային դիվանագիտության կարևորագույն խնդիրներից մեկն է: Սույն հոդվածում անդրադարձ է կատարվում ՈԴ արտաքին քաղաքականության մեջ նախագահ Վ. Պուտինի կառավարման առաջին տարիներին տեղի ունեցած

ՄԵՍՐՈՊ ՄԱՀԾՏՎԵ ՀԱՍԱՍՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

Կտրուկ փոփոխություններին, որի արդյունքում էներգետիկ գործոնը դիտարկվեց որպես լուրջ լծակ առկա միաբներ աշխարհակարգի դեմ պայքարում: ՈԴ արտաքին քաղաքականության մեջ տեղի ունեցած խորքային փոփոխությունները միանշանակ փոխեցին միջտարածաշրջանային հարաբերությունների ընթացքը, որի քաղաքագիտական վերլուծությունը քաղաքագիտության կարևոր խնդիրն է, ինչի ուսումնասիրման յուրատեսակ փորձ է նաև այս հոդվածը:

РЕЗЮМЕ

Энергетический фактор как рычаг внешней политики РФ направленный против однополярного миропорядка

Андраник Григорян

Ключевые слова: энергетический фактор, межрегиональные отношения, однополярный порядок, всемирный политический процесс, внешняя политика, Российская Федерация, Западно-Восточные отношения.

Влияние энергетического фактора на процессы международных и межрегиональных отношений в настоящее время очень возросло и стало одной из наиважнейших задач современной дипломатии. Данная статья посвящается внешней политике РФ, а именно глобальным изменениям произошедшим в начальные годы правления В.В.Путина, в результате которых энергетический фактор был рассмотрен как серьезный рычаг в борьбе с существующим однополярным миропорядком. Произошедшие коренные изменения политики РФ однозначно изменили процесс межрегиональных отношений. Политическое обозрение данных изменений является главной политической задачей, изучению которых посвящена также данная статья.

SUMMARY

Energetic Factor as an Engine against the Unipolar World System in the RF Foreign Policy

Andranik Grigoryan

Keywords: energetic factor, interregional relations, unipolar world system, geopolitical process, foreign policy, Russian Federation, East-West relations.

Nowadays the impact of energetic factor upon the processes of international and interregional relations has increased and is considered to be one of the major issues of the present-time international diplomacy. This article is devoted to the foreign policy of the Russian Federation, namely, the global changes that took place during the first years of Vladimir Putin's presidency. During this period the energetic factor acquired the status of a serious leverage in the struggle against the current unipolar world system. The profound changes in the RF foreign policy definitely transformed the process of interregional relations. The political analysis of these transformations is considered to be the most essential political issue. This article may as well stand as a unique experimental attempt to study this problem.